ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանկի կողմից պատրաստված տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող

Ինչպես նախորդ տարիներին, 2012 թվականին ևս, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), հետևելով իր կողմից ընտրված առաջընթացի և դինամիկ զարգացման ռազմավարությանը, մատուցելով ժամանակակից, բարձրակարգ ու որակյալ բանկային ծառայություններ, գործունեության մի շարք բնագավառներում ունեցել է նկատելի ձեռքբերումներ:

Արդյունքում, 2012 թվականին շարունակվել են նախորդ տարիների զարգացման միտումները, և Բանկն ապահովել է.

- ✓ ակտիվների շարունակական աճ,
- ✓ վարկային պորտֆելի աճ,
- ✓ հաճախորդներից ներգրավված ավանդների աճ,
- ✓ մասնաճյուղային ցանցի համալրում ու զարգացում,
- ✓ թղթակցային հարաբերությունների և դրամական փոխանցումների միջազգային համակարգերի հետ համագործակցության ընդլայնում,
- ✓ պլաստիկ քարտերով գործառնությունների շուկայում ակտիվ գործունեության ծավալում,
- ✓ առաջարկվող բանկային ծառայությունների ընդլայնում,
- ✓ սեփական ուսումնական կենտրոնի ստեղծում,
- ✓ ISO/IEC 27001:2005 տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Գործունեության հիմնական ցուցանիշները

2012 թվականի ընթացքում Բանկի ակտիվներն աճել են 19,601,530 հազ. դրամով (14%-ով)՝ կազմելով 186,739,431 հազ. դրամ, ընդ որում, 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվների կառուցվածքում առավելապես գերակշռում են տրամադրված վարկերը և փոխատվությունները՝ ընդհանուր ակտիվների մոտ 68%-ը:

2012 թվականի ընթացքում Բանկը շարունակել է ակտիվ վարկավորման գործընթաց ծավալել, արդյունքում, Բանկի կողմից տրված վարկերն ու փոխատվություններն աճել են 15,729,834 հազ. դրամով (14%-ով)՝ 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմելով 126,803,939 հազ. դրամ: 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի ու փոխատվությունների 70%-ից ավելին (88,955,722 հազ. դրամ) տնտեսության զարգացմանը նպատակաուղղված բիզնես վարկերն են, վերջիններս նախորդ տարվա համեմատ աճել են 5,346,931 հազ. դրամով (6%-ով):

2012 թվականին Բանկի գործունեությունն ուղղված է եղել իր հաճախորդներին միջոցների ներգրավման շահավետ պայմաններ առաջարկելու և կայուն ռեսուրսային բազան ընդլայնելու նպատակի իրագործմանը: Տարվա ընթացքում հաճախորդներից ներգրավված միջոցներն աճել են 3,182,407 հազ. դրամով (3%-ով)՝ կազմելով 97,411,255 հազ. դրամ: Հաճախորդների կողմից վստահության ապացույց է այն, որ 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներից ներգրավված միջոցների 77%-ը (75,097,843 հազ. դրամ) ժամկետային ավանդներ են, վերջիններս նախորդ տարվա համեմատ աճել են 40%-ով:

Բանկը 2012թ-ի գործունեության արդյունքներով կրել է 1,856,741 հազ. դրամի վնաս՝ հիմնականում պայմանավորված ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստին կատարված մասհանումներով: Չնավորված վնասի պատճառով Բանկի կապիտալը նվազել է 8%-ով՝ կազմելով 20,786,393 հազ. դրամ:

Բանկի հաճախորդները

Ինչպես նախորդ տարիներին, 2012թ-ին ևս Բանկի գործունեությունը նպատակաուղղված է եղել հաճախորդների սպասարկման որակի կատարելագործմանն ու պահանջմունքների բավարարմանը, ինչի մասին վկայում են Բանկի հաճախորդների քանակի էական աճը. 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների թիվը կազմում էր 58,997, իսկ արդեն 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 70,347, որից 67,718-ը՝ ֆիզիկական, իսկ 2,629-ը՝ իրավաբանական անձիք են:

Մասնաճյուղային ցանց

Բանկը, ծառայությունների մատուցման աշխարհագրությունը ընդլայնելու և դրանք հաճախորդների ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով, վարում է ինչպես մասնաճյուղերի ցանցի ընդլայնման, այնպես էլ գործող մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացման քաղաքականություն: Միայն 2012թ-ի ընթացքում Բանկը բացել է երեք մասնաճյուղ՝ երկուսը՝ Երևան քաղաքում («Մեբաստիա» և «Քանաքեռ» մասնաճյուղերը), մեկը՝ Դիլիջան քաղաքում («Դիլիջան» մասնաճյուղը), իրականացվել է նաև Ստեփանակերտ քաղաքում գործող «Ստեփանակերտ» մասնաճյուղի հասցեափոխություն:

2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի գործող երեսունմեկ մասնաճյուղ. տասներկուսը՝ Երևանում քաղաքում, տասներկուսը՝ ՀՀ մարզերում, յոթը՝ ԼՂՀ-ում:

2012թ-ին ՀՀ ԿԲ-ի կողմից գրանցվել է Լիբանանի Հանրապետության Բեյրութ քաղաքում բացվող «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ներկայացուցչությունը:

Թղթակցային հարաբերություններ և դրամական փոխանցումներ

Բանկը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի հետ թղթակցային հարաբերությունների հաստատման, տեղական և միջազգային վճարային համակարգերին անդամակցելու, ինչպես նաև մասնաճյուղային ցանցի ընդլայնման միջոցով, տարեցտարի էլ ավելի է մեծացնում դրամական փոխանցումների իրականացման իր ծավալն ու աշխարհագրությունը:

2012թ-ի ընթացքում Բանկը շարունակել է միջազգային դրամական փոխանցումներ իրականացնել «Money Gram», «Anelik» և «БЫСТРАЯ ПОЧТА» դրամական փոխանցումների համակարգերով, ինչպես նաև նոր համագործակցության պայմանագրեր է կնքել «CoinStar», «RIA», «Unistream» և «Intelexpress» միջազգային դրամական փոխանցումների համակարգերի հետ:

Ինչպես նախորդ տարիներին, 2012թ-ին ևս Բանկը շարունակել է ընդլայնել ոչ ռեզիդենտների հետ թղթակցային հարաբերությունները. թղթակցային հաշիվներ են բացվել Bank of Georgia (Georgia, Tbilisi) և Raiffeisen Bank International AG (Austria, Vienna) բանկերում:

2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թղթակցային հարաբերություններ ունի 32 բանկերի հետ, որից 21-ը՝ ոչ ռեզիդենտ բանկեր են:

Վարկային ծրագրեր

Հաճախորդների համար վարկերի լայն տեսականի և առավել մատչելի վարկային պայմաններ ապահովելու նպատակով՝ 2012 թվականի ընթացքում Բանկը շարունակել է համագործակցել մի շարք հեղինակավոր կազմակերպությունների վարկային ծրագրերի հետ, ինչպես նաև ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հետ կնքվել է «Վարկային պորտֆելի երաշխավորության համաձայնագիր» և «Զեռնարկությունների Զարգացման և Շուկայի Մրցունակության ծրագրի շրջանակներում փոխըմբռնման հուշագիր»:

Պլաստիկ քարտեր

2012 թվականի ընթացքում պլաստիկ քարտերով գործառնությունների շուկայում ակտիվ գործունեություն ծավալելու արդյունքում Բանկը մեծացրել է իր կողմից տրամադրված պլաստիկ քարտերի քանակը 9,593-ով՝ դրանց թիվը դեկտեմբերի 31-ի դրությամբ հասցնելով 53,483-ի, այդ թվում ԱրՔա, VISA International և MasterCard վճարային համակարգերի պլաստիկ քարտերի քանակը համապատասխանաբար կազմել են՝ 22,826, 17,724 և 12,933:

Բանկը հանդիսանում է ԱրՔա և VISA International վճարային համակարգերի լիիրավ անդամ, 2012թ-ին Բանկը ստացել է նաև MasterCard Worldwide վճարային համակարգի լիիրավ անդամի կարգավիճակ:

2012թ-ի ընթացքում Բանկն ընդլայնել է նաև շահագործվող POS-տերմինալների և բանկոմատների ցանցը՝ դրանց թվաքանակը համապատասխանաբար հասցնելով 256-ի և 102-ի: Արտարժույթի փոխանակման մեքենաների թվաքանակը կազմել է 59: Հաշվետու տարում շահագործվել է 19 կոմբինացված ինքնասպասարկման մեքենա:

Նոր ծառայություններ

2012թ-ի ընթացքում Բանկն իր կողմից մատուցվող ծառայությունների ցանկը համալրել է ևս մի քանիսով՝

- ✓ առարկայազուրկ մետաղական հաշիվների բացում,
- ✓ ոսկու ձուլակտորների վաճառք,
- ✓ Voyage և Gold Voyage ճանապարհորդական սակագնային փաթեթներ:

Կադրային քաղաքականություն

2012թ-ի ընթացքում Բանկն իր կողմից իրականացնող մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության շրջանակներում շարունակել է ներգրավել որակյալ մասնագետների, կատարել մարդկային ռեսուրսների հնարավորինս ճիշտ տեղաբաշխում և նվազագույնի հասցնել կադրերի հոսունությունը:

2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, նախորդ տարվա 583 աշխատակցի փոխարեն, Բանկն արդեն ունի 677 աշխատակից:

2012թ-ին Բանկում ստեղծվել է սեփական ուսումնական կենտրոն, որը նպատակ ունի դասընթացների, սեմինարների, վերապատրաստման ծրագրերի և ատեստավորման կազմակերպման միջոցով ապահովել աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների անընդհատ զարգացումն ու որակավորման բարձրացումը:

ISO/IEC 27001:2005 ստանդարտներ

2012 թվականին Բանկում աշխատանքներ են տարվել ISO/IEC 27001:2005 տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

Խորհրդի նախագահ	Սերգեյ Արզումանյան
Խորհրդի անդամ	Ալիկ Չիրկինյան
Վարչության նախագահ	Արա Կիրակոսյան
Գլխավոր հաշվապահ	Ռուզան Խաչատրյան